17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 220(5303)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## Նալբանդյանը ուշադրություն է հրավիրել հայ զինծառայողի մահվան վրա

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի, Ժակ Ֆորի, Ջեյմս Ուորլիքի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ երեկվա հանդիպմանը Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը համանախագահների ուշադրությունը հրավիրել է Տավուշի մարզի սահմանային գոտում դեկտեմբերի 14-ին ադրբեջանական կողմից արձակած կրակի հետեւանքով հայ զինծառայողի սպանության վրա:**

**ԱԳՆ հաղորդագրության համաձայն, Վիեննայում նոյեմբերի 19-ին կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման եւ Կիեւում դեկտեմբերի 4-ին Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունների համատեքստում զրույցի ընթացքում շարունակվել են քննարկումները ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացը առաջ մղելու վերաբերյալ:**



**Նախարարն ընդգծել է, որ չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահ երկրների կողմից բազմիցս հնչող հրադադարի ամրապնդման անհրաժեշտության մասին կոչերին, հայ-ադրբեջանական սահմանին եւ Ադրբեջանի ու Արցախի միջեւ շփման գծում Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի մշտական խախտումների զոհ են դառնում ոչ միայն զինծառայողներ, այլեւ քաղաքացիական անձինք, գնդակոծվում են քաղաքացիական օբյեկտներ:**

**Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը շեշտել է, որ նման սադրանքները խոչընդոտում են խաղաղ կարգավորման ուղղությամբ համանախագահների եւ Հայաստանի կողմից գործադրվող ջանքերին: Հանդիպմանը արծարծվել է նաեւ հաջորդ տարեսկզբին Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների նոր հանդիպում կազմակերպելու հնարավորությունը:**

**Համանախագահներին երեկ ավելի ուշ ընդունել է Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, համանախագահները ներկայացրել են Բաքվում իրենց ունեցած հանդիպումների արդյունքները, ինչպես նաեւ հանրապետության նախագահի հետ քննարկել ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի շրջանակներում նախագահական եւ նախարարական մակարդակներով հետագա հնարավոր հանդիպումների վերաբերյալ հարցեր:**

**Մինչեւ Երեւան ժամանելը Մինսկի խմբի համանախագահների պատվիրակությունը Բաքվում էր, հանդիպումներ են տեղի ունեցել Ադրբեջանի նախագահ Ալիեւի, արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ:**

**Վ. Պ.**

## Պատգամավորները բան գիտե՞ն, որ ասեն Մաքսային միության մասին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Դեկտեմբերի 20-ին կհրավիրվի Ազգային ժողովի արտահերթ նիստ՝ կառավարության նախաձեռնությամբ: Ըստ որոշ տեղեկությունների՝ օրակարգում լինելու է Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության հարցը: Ինչպես Պուտինն էր նկատել՝ Հայաստանը շտապում է, ու անգամ իրենք՝ ռուսները Հայաստանի հետեւից չեն հասնում անդամակցությունը գործարկելու առումով:

Իսկ արտահերթ նիստը կարող է դառնալ այն առիթը, որտեղ կարող են դրսեւորվել մեր քաղաքական ուժերը՝ թեմայի վերաբերյալ տրամադրությունների առումով: Ասենք՝ Հայաստանի նախագահին պաշտպանող որոշում կայացնելու մեջ մեղադրողները, որոնք, սակայն, կոնկրետ Մաքսային միություն մտնելու վերաբերյալ խուսափում են տեսակետ հայտնել՝ Ռուսաստանի ու Պուտինի աչքից չընկնելու համար, այստեղ արդեն հստակ պետք է դիրքորոշում հայտնեն: Ու այդ ժամանակ կտեսնենք՝ արդյոք կգտնվի՞ երկուսուկես պատգամավոր, որ կպաշտպանի եվրոտեսակետները: Ճիշտն ասած՝ կուզեինք, որ գոնե մի երկու տասնյակ այդպիսի պատգամավորներ գտնվեին, որովհետեւ աննորմալ է, որ երեք- չորս տարի եվրոուղին գովազդող մեր գործիչներն այդքան անսկզբունքային եղան՝ երկու գիշերվա ընթացքում իրենց ներսի եվրոպարունակությունը փոխարինելով, ու մի խորհրդարանում, որտեղ կա Եվրոինտեգրման մի ամբողջ հանձնաժողով, բոլորն այդքան թաքնված ՄՄ-ամետ եւ ռուսամետ դուրս եկան հանկարծ: Ու անգամ գտնվեց պատգամավոր, որ հայկական հեռուստատեսությամբ ռուսերենով հեռարձակվող հաղորդումը պաշտպանելու համար մենամարտեց հայ լրագրողների հետ, ու բանը բանից անցավ՝ միմյանց վիրավորելու տեսակետից: Ու այդ արտահերթի օրը ԱԺ-ում գուցե վերջապես հասկանալի լինի՝ ո՞ր քաղաքական ուժն է ընդդիմադիր, ո՞ւմ եւ ինչի՞ն է ընդդիմադիր, ինչո՞ւ է ընդդիմադիր: Կամ էլ կպարզվի, որ ոչ մի ընդդիմադիր ուժ էլ չկա՝ քվոտային ընդդիմություն է մեր խորհրդարանում:




Մյուս կողմից՝ Մաքսային միության վերաբերյալ քննարկումը կարող է առիթ դառնալ, որ քաղաքական գործընթացներում խաղից դուրս մնացած Ազգային ժողովը գոնե մի փոքր խաղի ներսում հայտնվի, թե չէ հնդկաստաններում եւ արգենտինաներում շոփինգները ոչ մի կերպ հնարավոր չէ քաղաքական գործընթացի բաղկացուցիչ դիտել:

*Տես էջ 3*

## Ադրբեջանն անտեսում է համանախագահների կոչերը

**Նոյեմբերի 5-ին Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպման ժամանակ արձագանքելով ռազմական գործողությունների առումով զսպվածություն ցուցաբերելու ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կոչին, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով ամբողջ այս ընթացքում հայկական կողմից չի արձակվել ոչ մի կրակոց:**

**Դեկտեմբերի 14-ի միջադեպը, որի ժամանակ հակառակորդի կրակից զոհվել է պայմանագրային զինծառայող, շարքային Հրանտ Սերյոժայի Պողոսյանը, հերթական անգամ ցույց է տալիս, որ ադրբեջանական կողմը, անտեսելով ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կոչերը, շարունակում է հրադադարի պահպանման անտեսման իր մշտական մոտեցումը, մասնավորապես՝ համանախագահների Բաքվում գտնվելու ժամանակ:**

**Այս ամենի արդյունքում ՀՀ զինված ուժերի գործողությունները լինելու են կանխարգելիչ եւ խիստ:**

## Ցավակցություն

Երեկ՝ դեկտեմբերի 16-ին, խորին ափսոսանքով տեղեկացանք, որ վախճանվել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հայրը՝ հողի աշխատավոր, իր անբասիր կենսակերպով եւ համեստ կենցաղով հայտնի

**Ազատ Ավետիսի Սարգսյանը:**

Ռամկավար Ազատական կուսակցությունն իր խորին ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում պարոն նախագահին ու նրա ընտանիքին եւ մաղթում, որ այս դժվարին պահին շարունակեն լինել ամուր եւ կորովի:

**ՌԱԿ Հանրապետական վարչություն**

«Ազգ»-ի խմբագրությունը միանում է ցավակցություններին:

***

*ՀՀ Նախագահի հոր՝ **Ազատ Ավետիսի Սարգսյանի** քաղաքացիական հոգեհանգիստը կկայանա Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցում, դեկտեմբերի 18-ին, ժամը 18.00-ին: Հուղարկավորությունից առաջ վերջին հրաժեշտը տեղի կունենա դեկտեմբերի 19-ին, ժամը 12.00-ին՝ նույն վայրում:*

## Ի՞նչ կտա Ադրբեջանին երկրորդ «դարի պայմանագիրը»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Այսօր ժամը 11-ին Բաքվի Հեյդար Ալիեւի անվան կենտրոնում նախատեսվում է ստորագրել «Շահդենիզ-2» գազակոնդենսատային հանքավայրի մշակման նախագծի համաձայնագիրը: Նախապես հայտարարվել էր, որ հանդիսավոր միջոցառմանը ներկա կգտնվի Իտալիայի վարչապետը, սակայն ավելի ուշ այդ երկրի փոխարտգործնախարար Մարթա Դասուն հանդես է եկել հայտարարությամբ, համաձայն որի Բաքվում պետք է բավարարվեն Իտալիայի ԱԳ նախարար Էմմա Բոնինոյի ներկայությամբ:

Հանդիսավոր արարողությանը ներկա կգտնվեն նաեւ Անգլիայի արտգործնախարարը, պաշտոնական պատվիրակություններ Հունաստանից եւ Ալբանիայից, Թուրքիայի եւ Վրաստանի էներգետիկայի նախարարները, ինչպես նաեւ «բազմաթիվ նավթագազային ընկերությունների թոփ-մենեջերներ», ինչպես տեղեկացրել է «Թուրան» գործակալությունը:

Ադրբեջանական մամուլն այսօր նախատեսված միջոցառումը համարել է «երկրորդ դարի պայմանագիր»: Ինչպես հայտնի է, 1994թ. ստորագրված համաձայնագիրը, որով ադրբեջանական նավթն արտահանվում է թուրքական Ջեյհան նավահանգիստ, ստացել է «դարի պայմանագիր» անվանումը: Անուրանալի է, որ Ադրբեջանի տնտեսության փրկությունը պայմանավորված է այդ գործարքով: Միաժամանակ, Ադրբեջանի՝ որպես պետության, հանդեպ միջազգային հետաքրքրությունը նույնպես պատճառաբանվում է նավթի եւ գազի հանդեպ արեւմտյան երկրների շահագրգռվածությամբ:

Ամեն ինչ գուցե իրոք «դարակազմիկ» լիներ, եթե մի քանի օր առաջ, ինչպես արդեն գրել ենք, Ադրբեջանի ֆինանսների փոխնախարարը հանդես եկած չլիներ սենսացիոն հայտարարությամբ, որի համաձայն հարեւան երկիրն առաջիկա մի քանի տարիներին ոչ մի կոպեկ եկամուտ չի ունենա իր տարածքում արդյունահանվող գազի վաճառքից:

Բանն այն է, որ այսօր ստորագրվելիք փաստաթղթով նախատեսվող «Շահդենիզ-2» ծրագիրն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են 60 մլրդ դոլարի ներդրումներ: Ադրբեջանը ոչ միայն այդքան, այլեւ առհասարակ որեւէ չափով ներդրումներ անելու ազատ գումարներ չունի: Եվ եթե այդ երկրի ֆինանսների փոխնախարարի պնդումներն իրական են, իսկ դրանք պաշտոնապես չեն հերքվել, ուրեմն կողմերը եկել են այն համաձայնությանը, ինչը նախապես առաջարկել էր բրիտանական BP ընկերությունը:

*Տես էջ 5*

# Տնտեսությունն ընդհանրապես եւ արդյունաբերությունը մասնավորապես՝ վերջին 2 տարիներին

## *Ինչպե՞ս են փոխվել ցուցանիշները Հայաստանում, Ադրբեջանում, ԱՊՀ եւ ԵՄ մի քանի երկրներում*




Այս կամ այն երկրի տնտեսական վիճակի մասին պատկերացում տվող հիմնական ցուցանիշը նախ եւ առաջ համախառն ներքին արդյունքն է (ՀՆԱ), իսկ տնտեսության կառուցվածքի եւ կենսունակության մասին վկայող հիմնական ցուցանիշը՝ արդյունաբերության զարգացումը: Ինչպիսի՞ն են եղել Հայաստանի, մեր հարեւան երկրների, ԱՊՀ եւ ԵՄ նոր անդամ դարձած մի քանի այլ երկրների ցուցանիշները 2013-ին նախորդող 2 տարիներին:

Հայաստանի տնտեսական (ՀՆԱ) աճի ցուցանիշը 2011-ին կազմել է 4,7 տոկոս, 2012-ին՝ 7,2 տոկոս: Մշտապես իր զարգացման տեմպերի մասին աղմկող Ադրբեջանի տնտեսական աճի ցուցանիշը 2011-ին կազմել է 1 տոկոս, 2012-ին 4,5 տոկոս: Հասկանալի է, որ հարեւան երկրի ՀՆԱ ծավալներն զգալիորեն ավելի են Հայաստանի համեմատ, բայց նախորդ երկու տարվա ցուցանիշները վկայում են, որ նախ տնտեսական աճի տեմպի ցուցանիշով Ադրբեջանը հետ է մնում Հայաստանից, երկրորդ՝ այդ աճի տեմպի նվազումն էլ պայմանավորված է նավթի արդյունահանման ծավալների՝ 2011-ից սկսված նվազման հետ: Հայտնի է, որ այդ տնտեսությունը հիմնված է հենց նավթային գործոնի վրա:

Հայաստանից ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր են 2011-ին ունեցել ԱՊՀ գրեթե բոլոր երկրները՝ Ռուսաստանից եւ Ադրբեջանից բացի, սակայն 2012-ին Հայաստանից ավելի մեծ աճ են արձանագրել միայն միջինասիական 3 երկրները: Բելառուսը, Ղազախստանը, Ուկրաինան, Ռուսաստանը ունեցել են աճի ավելի ցածր տեմպեր, իսկ Ղրղզստանն ու Մոլդովան տնտեսական անկում են արձանագրել:

Հետաքրքրական են Եվրոմիության նոր անդամակցած երկրների ՀՆԱ աճի ցուցանիշները վերջին 2 տարիներին: Հաճախ է խոսվում Ռումինիայի, Բուլղարիայի եւ Հունգարիայի մասին, որոնք ԵՄ-ին անդամակցելուց հետո բախվել են լուրջ տնտեսական մարտահրավերների եւ կորուստներ կրել՝ արտահանման նվազման, դեպի ԵՄ ավելի զարգացած երկրների արտագաղթի ուժեղացման եւ այլ առումներով: Ռումինիայում 2011-ին գրանցվել է 2,5 տոկոս տնտեսական աճ, 2012-ին՝ 3,7 տոկոս, Բուլղարիայում 2011-ին տնտեսական աճը կազմել է 1,8 տոկոս, 2012-ին՝ 0,8 տոկոս, Հունգարիայում 2011-ին արձանագրվել է 1,6 տոկոս տնտեսական աճ, իսկ 2012-ին1,7 տոկոս տնտեսական անկում:

Այժմ ներկայացնենք, թե ինչպե՞ս են փոխվել արդյունաբերական արտադրանքի ծավալները մեր եւ վերոնշյալ երկրներում, ինչը որոշակի ենթադրությունների տեղիք կտա, թե ինչի՞ հաշվին է ավելացել կամ նվազել ՀՆԱ-ն:

Հայաստանի արդյունաբերությունը թե 2011-ին, թե 2012-ին ունեցել է բարձր աճ: 2011-ին արդյունաբերական արտադրանքի ծավալը մեր երկրում ավելացել է 13,9 տոկոսով, 2012-ին՝ 8,8 տոկոսով: Ընդ որում, 2011-ին ունեցել ենք արդյունաբերական արտադրանքի ծավալների ամենաբարձր աճը ԱՊՀ-ում, իսկ 2012-ին 2-րդն ենք եղել այդ ցուցանիշով:

Մեր հարեւան Ադրբեջանի արդյունաբերության արտադրանքի ծավալները 2011-ին անկում են ունեցել՝ 5 տոկոսով, նույնը նաեւ 2012-ին՝ 2,3 տոկոսով: Այս ցուցանիշները առավել հստակ են դարձնում այն իրողությունը, որ նավթի արդյունահանման նվազումն անմիջականորեն եւ էապես ազդում է այդ երկրի արդյունաբերության եւ տնտեսության ընդհանուր ցուցանիշի վրա:

Արդյունաբերության արտադրանքի ծավալների ցուցանիշները ԵՄ-ին նոր անդամակցած Ռումինիայում, Բուլղարիայում եւ Հունգարիայում հետեւյալ կերպ են փոխվել՝ Ռումինիայում 2011-ին գրանցվել է արդյունաբերական արտադրանքի 7,6 տոկոս աճ, իսկ 2012-ին՝ 2,8 տոկոս աճ, Բուլղարիայում՝ 2011-ին արդյունաբերության ծավալներն աճել են 5,6 տոկոսով, իսկ 2012-ին նվազել 1,4 տոկսով, Հունգարիայում 2011-ին 5,6 տոկոսով ավելի արդյունաբերական արտադրանք է թողարկվել, իսկ 2012-ին՝ 1,4 տոկոսով պակաս:

Ինչպես արդեն նշեցինք, սրանք 2011 եւ 2012 թվականների ցուցանիշներն են: Ակնհայտ է, որ 2013-ն ավելի դժվար տնտեսական տարի է համարվում եւ բոլոր միջազգային ֆինանսական կազմակերպությունների կանխատեսումներով տնտեսական աճի տեմպերի նվազում է սպասվում թե ամբողջ աշխարհում, թե մեր մյուս երկրում եւ մեզ համար հետաքրքրություն ներկայացնող երկրներում: Քիչ ժամանակ է մնացել մինչեւ տարվա ավարտը, որից հետո կանդրադառնանք նաեւ 2013-ի ՀՆԱ եւ արդյունաբերական արտադրանքի ցուցանիշներին:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՑԱՆՑԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն 60 նոր բազային կայան է տեղադրել մարզերում ու Երեւանում

**Ցանցի ընդարձակման եւ արդիականացման ծրագրի շրջանակներում, վերջերս հանրապետության տարածքում ՎիվաՍել-ՄՏՍ-ն տեղադրել է 60 նոր բազային կայան (30-2G/երկրորդ սերունդ եւ 30 3G/երրորդ սերունդ): Բազային 2 կայան տեղադրվել է Ավան, 4-ը՝ Շենգավիթ, 4-ը՝ Նորք-Մարաշ, եւ 6-ը՝ Աջափնյակ վարչական շրջաններում: Բազային 14 կայան է տեղադրվել Արարատի մարզի Սիս, Արաքսավան, Նոր Խարբերդ, Հովտաշատ, Զանգակատուն, Արեւաբույր, Արբատ գյուղերում, եւ 2 կայան՝ Մասիս քաղաքում: Բազային 14 կայան տեղադրվել է Արմավիրի մարզի Նոր Արտագերս, Արգավանդ, Երվանդաշատ, Մարգարա, Մրգաշատ, Ալաշկերտ ու Քարակերտ գյուղերում, եւ 2 կայան՝ Էջմիածին քաղաքում: Բացի դրանից՝ բազային 4 կայան է տեղադրվել Սյունիքի մարզի Շաքի ու Լոր գյուղերում, 2-ական կայան՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում եւ Վայոց Ձորի մարզի Հորբատեղ գյուղում, ինչպես նաեւ 2-ական կայան՝ Կոտայքի մարզի Բալահովիտ ու Արագածոտնի մարզի Նոր Ամանոս գյուղերում: Քարակերտ, Նոր Ամանոս, Լոր, Հորբատեղ ու Զանգակատուն գյուղերում բազային նոր կայաններ տեղադրելու արդյունքում նշված գյուղերի բնակչությանը հասանելի են դարձել 2G եւ 3G ձայնային եւ տվյալների փոխանցման առավել բարձրորակ ծառայությունները: Մնացյալ բազային կայանները տեղադրվել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի շարժական ցանցի հնարավորություններն ու թողունակությունն ավելացնելու նպատակով:**

**Բազային կայանների տեղադրման մասին որոշում կայացնելիս ՎիվաՍել-ՄՏՍ-ն չի առաջնորդվում բացառապես ներդրումների վերադարձելիության (Return on Investment) չափանիշներով: Կայանների տեղադրումը եւ շարժական կապի ձայնային ու ինտերնետ հասանելիության ծառայությունների ապահովումը ՎիվաՍել-ՄՏՍ-ի համար առաջնային խնդիրներ են, քանի որ կապի ենթակառուցվածքի առկայությունը սոցիալական եւ ռազմավարական հարց է: Որպես սոցիալապես պատասխանատու օպերատոր, ՎիվաՍել-ՄՏՍ-ն վճռական է ապահովելու փոքր բնակչություն եւ ծառայությունների սպառման փոքր հեռանկարներ ունեցող ամենահեռավոր շրջանները՝ շարժական կապի ձայնային եւ ինտերնետ հասանելիության ամենանորարարական ծառայություններով:**

**Ցանցի ընդարձակման եւ արդիականացման ծրագրի շրջանակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ն ընթացիկ տարվա սկզբից առ այսօր Հայաստանի մարզերում տեղադրել է երրորդ սերնդի 186 նոր 3G եւ երկրորդ սերնդի (2G) 77 նոր բազային կայան: Ընդհանուր առմամբ երկրով մեկ տեղադրվել է 263 բազային նոր կայան: Ծրագրի շրջանակներում 2G կայանները արդիականացվել են ձայնային ծառայությունների, իսկ 3G կայանները՝ տվյալների փոխանցման հնարավորությունների ընդլայնման եւ թողունակության ավելացման կտրվածքով:**

**Ցանցի արդիականացման, վերազինման եւ ընդլայնման աշխատանքները շարունակվում են: Նախատեսվում է մինչեւ տարեվերջ տեղադրել հավելյալ 90 նոր բազային կայան:**

# Թանկարժեք մետաղների պետական գներն աճել են

**Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների պետական գնման եւ բացթողնման գներն աճել են: Այդ մասին «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից: «Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության կողմից 2013 թվականի դեկտեմբերի 16-ից 22-ի համար սահմանվել են թանկարժեք մետաղների մեկ գրամ քիմիապես մաքուր մետաղի (պետական ստանդարտ ձուլակտորի համար) պետական գնման եւ բացթողնման գները՝ արտահայտված ՀՀ դրամով:**

**Ոսկու համար սահմանվել է գնման գին՝ 14872.35 (+110.37), բացթողնման գին՝ 16165.6 (+119.96), արծաթի գնման գին՝ 237.69 (+4.45), բացթողնման գին՝ 258.36 (+4.84), պլատինի գնման գին՝ 16489.24 (+139.86), բացթողնման գին՝ 17923.09 (+152.02), պալադիումի գնման գին՝ 8792.27 (+102.8), բացթողնման գին՝ 9556.82 (+111.74):**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Etihad ավիաընկերությունը շաբաթական 4 անգամ կիրականացնի Աբու-Դաբի-Երեւան չվերթը

Արաբական Միացյալ Էմիրությունների ազգային՝ Etihad ավիաընկերությունը երեկ հայտարարել է Աբու-Դաբի-Երեւան՝ շաբաթական չորս չվերթի իրականացման մասին: Դեպի Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք չվերթները կմեկնարկեն 2014թ. հուլիսի 2-ից:

ԱՄԷ գլխավոր փոխադրողը երկու դաս ունեցող A320 ինքնաթիռներ է գործարկելու՝ 16 բիզնես դասի եւ 120 էկոնոմ դասի տեղերով, այսպիսով շաբաթական առաջարկելով 1,088 ուղեւորի փոխադրում:

Etihad ավիաընկերության նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրեն Ջեյմս Հոգանը նշել է. «Etihad ավիաընկերության՝ դեպի Երեւան չվերթերի իրականացումը համահունչ է մեր՝ զարգացող եւ արագ աճող շուկաներ ներթափանցելու ռազմավարությանը:

Etihad ավիաուղիները կլինի միակ առեւտրային ավիաընկերությունը Ծոցի երկրներից, որ կտրամադրի իր ծառայությունների ամբողջական փաթեթը դեպի Երեւան:

Բիզնեսի եւ հանգստանալու նպատակով ճանապարհորդել ցանկացողները Հայաստանից դուրս լավ հնարավորություն ունեն իրենց չվերթերը կապելու Աբու-Դաբի հաբի հետ, որտեղից էլ՝ տարբեր ուղղություններով, այդ թվում՝ դեպի Հյուսիսային Ամերիկա:

«Նոր՝ դեպի Երեւան ուղղությունը կնպաստի տուրիզմի զարգացմանը Հայաստանում, ինչպես նաեւ էլ ավելի կուժեղացնի արդեն կայացած՝ առեւտրային եւ զբոսաշրջային կապերը Հայաստանի եւ ԱՄԷ-ի միջեւ»:

Լինելով Աբու-Դաբիից մոտ երեք ժամ հեռավորության վրա՝ Հայաստանը իդեալական ուղղություն է զբոսաշրջիկների համար, ովքեր հիասքանչ տեսարաններից ու բազում ժամանցի վայրերից բացի փնտրում են հիանալի մշակույթ եւ բազմամյա պատմություն:

# Անցուդարձ

Այս տարի Հայ առաքելական սուրբ եկեղեցին Սբ Հակոբի, Մարուգե ճգնավորի եւ Մելիտոս եպիսկոպոսի հիշատակության տոնը հիշատակել է դեկտեմբերի 15-ին, Հիսնակաց 3-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

Ավանդույթի համաձայն՝ արդեն 4-րդ տարի Ներքին Դվին գյուղի կիսակառույց, փայտակերտ, չգործող Սուրբ Հակոբ եկեղեցում պատարագ է մատուցվում՝ ի հիշատակ սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի: Պատարագիչն Արարատյան հայրապետական թեմի Արտաշատի Ներքին Դվին գյուղի Ս. Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ Երվանդ քհն. Բաբայանն էր:

## Ուխտագնացությունը՝ նոր գործի սկիզբ



Ավանդույթի համաձայն՝ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հավատացյալները, ձմռան ցուրտն ու առատ ձյունը, ճանապարհի դժվարություններն անտեսելով, Հակոբ Մծբնա Հայրապետի հիշատակության տոնին՝ Վահրամ եւ Գեղամ սարկավագների հետ ուխտի գնացին Ներքին Դվինի Սուրբ Հակոբ փայտակերտ եկեղեցի: Ուխտագնացությունն սկսվեց Վահրամ սարկավագի Տերունական աղոթքով: Ուխտագնացները երգում էին «Առավոտ լուսո»-ն եւ յուրաքանչյուրն իր սրտում փնտրում էր մեծ սրբի բարեխոսությունը: Խնկաբույր եկեղեցին հոգեւոր դասի աղոթքներով եւ երգչախմբի գեղեցիկ երգերով, բազմաթիվ հավատացյալներով միանգամից լցվել էր, ջերմացել, կարծես հրաշագործ սրբի ոգին էր թեւածում, ուժ տալիս բոլորին ու ոգեշնչում:

Հոգեւոր կառույցը տարեցտարի նորոգվում է: Եկեղեցին կառուցվել է 1885 թվականին, ինչպես գրված է հնամաշ մուտքի դռան վերնամասում: Պատմում են, երբ Ակոռիում երկրաշարժ է եղել, գյուղացիները եկեղեցու սուրբ մասունքներից մի քանի խաչքար վերցրել, բերել են Ներքին Դվին եւ կառուցել Սուրբ Հակոբ եկեղեցին: Այդ մասունքներն ամրացված են եկեղեցու դրսի պատերին: Կառուցման ընթացքում մայրաքաղաք Դվինի ավերակներից գյուղաբնակները բերել են եկեղեցու սրահի վեց սյուների հիմքերը: Երկու 20 մետրանոց գերաններն էլ իրար են ագուցում այդ սյուները: Ցավոք, աստվածամերժության տարիներին եկեղեցին մյուսների բախտին է արժանացել՝ դարձել գինու, պանրի եւ ալյուրի պահեստ: Հետո քայքայվել է, համարյա կիսափլվել: Գյուղացիները շատ են մտահոգվել: Եվ ահա գյուղի երախտավորների՝ Վիրաբ Դերմոյանի, Միշա Թադեւոսյանի եւ շնորհալի բնակիչների ջանքերով նորոգվում է Սուրբ Հակոբ եկեղեցին: Հիմնական բարերար չունեն: Փայտակերտ տաճարը նորոգելու համար դիմել են ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին, պատասխանը չի ուշացել, անմիջապես աջակցել է: «Ում դիմում ենք, մարզպետարան, գյուղապետարան, ծանոթ կամ բարեկամ՝ չեն մերժում, օգնում են՝ ինչով հնարավոր է: Այսօր եկեղեցու ներսն ապահով է, ոչ մի ջրի կաթիլ չի կարող ներս թափանցել: Դրսի պատերի հիմքն էլ շարված է: Իսկ խորանն ընդամենը մի օր առաջ ենք կառուցել, համոզված էինք, անպայման ուխտավորներ եւ շատ հավատացյալներ կգան այս հիշարժան տոնին, թող որքան հնարավոր է, պատշաճ լինի»,- ասում է Վիրաբ Դերմոյանը:

Ս. Հակոբ Մծբնա հայրապետն ընդհանրական եկեղեցու հեղինակավոր սիրված սրբերից է: Ծնվել եւ ապրել է Մծբին քաղաքում (այժմ՝ Նուսեյբին, Թուրքիայի հարավարեւելյան սահմանի մոտ): Եղել է ճգնավոր, համաքրիստոնեական սուրբ, Մծբինի ասորի եպիսկոպոսը: Ըստ հայոց ճառընտիրների՝ Գրիգոր Ա Լուսավորչի հորաքրոջ որդին էր: Ըստ պատմական աղբյուրների՝ Հայոց Խոսրով Ա Մեծ (211-259) թագավորի սպանությունից հետո, երբ Անակ Պարթեւի տոհմը բնաջնջվել է, դայակները մանուկ Սուրենին եւ Հակոբին գաղտնի տարել են Կեսարիա, ուր նրանք դաստիարակվել են քրիստոնեական հավատքով: Հետո Հակոբն իր քրոջ հետ տեղափոխվել է Պարսկաստան, ապրել արքունիքում: Սակայն թողել է այդ ճոխ կյանքը, դարձել ճգնավոր: Սուրբ հոգու ներգործությամբ մեկնել է Մծբինի վանքերից մեկը՝ Մարուգե ճգնավորի մոտ: Նրանից լսելով, որ մարդկանցից շատերը թեեւ հավատքի են եկել, բայց թերահավատ են Նոյյան տապանի գոյությանը, որոշել է բարձրանալ լեռը՝ տապանից մի մասնիկ բերելու, բայց Մասիսի լանջին հոգնել է եւ ննջել: Տեր հայրն իր քարոզի ժամանակ եկեղեցու հավատացյալներին պատմեց, որ ըստ ավանդության՝ Աստծո հրեշտակը նրան մատուցել է Նոյյան տապանից փայտի մի կտոր: Հակոբ Մծբնացին որտեղ հրեշտակից ստացել է Նոյյան տապանի կտորը, այդ վայրում սառնորակ աղբյուր է բխել, բուժիչ, հրաշագործ հատկություններ ունեցել, հետո նույն տեղում հիմնվել է Ակոռիի Ս. Հակոբ վանքը, ուր պահվել են հայրապետի մասի ոսկրը եւ Նոյյան տապանի փայտի կտորը՝ միմյանց շղթայով ամրացված (առ այսօր այդ սրբությունը պահվում է Ս. Էջմիածնում): 338-ին Հակոբ Մծբնացին կազմակերպել է պարսից Շապուհ II-ի զորքերից պաշարված Մծբինի 70-օրյա պաշտպանությունը: Մասնակցել է Նիկիայի Ա տիեզերական ժողովին (325), եղել Եփրեմ Ասորու ուսուցիչը:

Ըստ ավանդությունների՝ սուրբը հրաշքներ է գործել՝ մեռցրել է մեռած ձեւացողին, ապա կենդանացրել նրան, Հիսուս Քրիստոսի անունով բուժել անդամալույծների, հարություն տվել մի մեռած մանկան եւ այլն: Սբ Հակոբ Մծբնա հայրապետն իր ջերմեռանդ աղոթքների ու ճգնությունների համար իբրեւ վարձատրություն Աստծուց ստացել է մարգարեության, հրաշագործության շնորհներ: Սբ Հակոբը 320-ական թթ. Ամիդայում ձեռնադրվել է եպիսկոպոս, ստանձնել Մծբինի առաջնորդությունը: Դարձի է բերել շատերին, հիմնել բազում եկեղեցիներ, դպրության օջախներ: Սբ Հակոբն իր սրբակենցաղ վարքով նմանվել է հրեշտակներին, կոչվել «մարմնավոր հրեշտակ»: Նրա կյանքը լեցուն է հրաշագործ դրվագներով: Մի անգամ սուրբը աղբյուրի մոտ տեսել է մի խումբ աղջիկների, որոնք իրենց հանդերձներն էին լվանում, տեսնելով երանելիին, չեն պատկառել: Սբ Հակոբը, կամենալով խրատել նրանց, անիծել է աղբյուրը, եւ այն ցամաքել է, իսկ աղջիկների մազերը սպիտակել են: Երբ տեսել են այդ ամենը՝ սրբի հետեւից գնալով, աղաչել են վերադառնալ եւ աղբյուրի ջուրը բխեցնել: Սուրբ Հակոբը վերադարձել է, աղոթել, ջուրը բխել է, սակայն աղջիկների մազերը չի սեւացրել, որ Աստծուն չմոռանան: Կատարած բազում հրաշքների շնորհիվ նրան կոչել են «Սքանչելագործ»: Սիրելի սրբի անունով գործում են բազմաթիվ եկեղեցիներ՝ Երեւանի Քանաքեռավանում, Արարատի մարզի Արարատ, Մրգավան եւ Ներքին Դվին գյուղերում: Վերջինս դեռ չգործող է, բայց ինչպես գյուղաբնակներն են ասում՝ հույս ունեն, առաջիկայում անպայման կգործի: «Գյուղն ունի մոտ 1000 տնտեսություն: Միահամուռ ուժերով գարնանը կսկսենք եկեղեցու ներսի հարդարման աշխատանքները: Հատակը սալիկապատելու ենք, նորոգելու ենք պատերը, մկրտության ավազանը, ձեւավորելու խորանը: Նախատեսել ենք կառուցել նաեւ զանգակատուն եւ մատաղատուն: Հիշարժան սրբին նվիրված մատաղը եփել ենք հարեւան գյուղացիների տանը: Պետք է համապատասխան պայմաններ ստեղծել: Համոզված ենք, որ ամեն ինչ անում ենք մեր ապագա սերնդին քրիստոնեավայել դաստիարակելու համար»,- ասում է Դերմոյանը: Հիրավի, եկեղեցի կառուցելով հարթում ենք նոր սերնդի ճիշտ ու միակ ճանապարհը, զերծ պահում աղանդավորներից: Իսկ ուխտագնացությունը ոչ միայն սրբություններին հաղորդակցվելու, հոգու մաքրագործման, ինքնակատարելագործման ճանապարհ է, այլեւ այդ հոգեւոր ճանապարհը նորոգող, մաքրող, մարդկանց սուրբ նպատակներն իրար միացնող, նոր գործեր սկսելու, ոգեշնչելու նախապայման...

ՕՎՍԱՆՆԱ ՄԱԴԱԹՅԱՆ

---

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ

# Պատգամավորները բան գիտեն, որ ասեն Մաքսային միության մասին

*1-ին էջից*

Անգամ՝ Լոռու մարզի տուրիստական համալիրում խորհրդարանների նախագահների մասնակցությամբ շաբաթ-կիրակի տեղի ունեցած հայ-վրացական խորհրդաժողովն է դժվար քաղաքական գործընթաց կոչելը, որքան էլ մայրաքաղաքից եւ հիմնական խորհրդարանական լրագրողներից հեռու՝ այնտեղ մի շարք կարեւոր միջպետական խնդիրների մասին էին խոսում (հայ-վրացական կարեւոր օրակարգից՝ հայ-վրացական-աբխազական երկաթուղու, «Բավրայի» անցակետի վերահսկողության եւ այլն):

Իսկ Մաքսային միություն մտնելու Հայաստանի որոշման վերաբերյալ քննարկելու բան, հրոք, կա. արդյո՞ք նոր մարտահրավերներ չեն ներկայանալու Հայաստանի տնտեսության համար ՄՄ մուտք գործելով, արդյո՞ք մեր ապրանքները մրցունակ կամ պահանջարկված են լինելու ՄՄ-ի՝ դեռեւս մեզ անհայտ օրենքներով եւ չկարգավորված դաշտում, կամ մեր արտադրանքը կարո՞ղ է առհասարակ մրցակցել ռուսական, ղազախական, բելառուսական արտադրանքի հետ, երբ ինքներս էլ գիտենք դրա մեծ մասի անորակությունը: Արդյոք մեր կառուցվածքներն օժտվա՞ծ են այնպիսի պաշտպանվածությամբ, որ ընդհանրապես մեր տնտեսությունը չի ճզմվի այլոց արտադրանքի էքսպանսիայից: Հասկացանք՝ եվրոպական շուկաներին պատրաստ չէինք՝ մեր անորակ, հաճախ կապկվող ապրանքներով ու զանազան արտադրական մեքենայություններով, բայց Մաքսայինին պատրա՞ստ ենք, ունե՞նք դրա պատասխանը:

Մյուս կողմից էլ՝ ո՞վ է նման բան կարողանալու քննարկել ԱԺ-ում, երբ երկու-երեք որակյալ տնտեսագետ հազիվ թե գտնվի ԱԺ պատգամավորների մեջ, մեծ մասը պարզապես բարձր խոսողներ կամ ընդհանրապես չխոսողներ են: Ու նրանցից շատերն էլ հազիվ թե կարողանան պատասխանել այն հարցին, որ եթե ու իսկապես իրականություն դառնա ՄՄ մտնելու Հայաստանի որոշումը, ու եկող տարվա երկրորդ կեսին Հայաստանն արդեն լինի Մաքսային միությունում (ինչին խիստ կասկածում է տողերիս հեղինակը), ապա ի՞նչ պետք է լինի 2014 թվականի բյուջեի կատարողականի հետ, ի՞նչ կերպ է լուծվելու կուտակային կենսաթոշակների՝ արդեն հիմնադրամներում կուտակված միջոցների հարցը, ի՞նչ է սպասվում դրամին, եթե ՄՄ-ում միասնական դրամական միավորով են հետագայում աշխատելու՝ էլ ի՞նչ կուտակային բաղադրիչ կամ դրանով գոյացած միջոցներ (հիշո՞ւմ եք ինչպես արժեզրկվեց ռուբլին եւ հազար ռուբլին մի գիշերում դարձավ 250 դրամ):

Թե՞ ինչպես կասկածում են ոմանք՝ կուտակային բաղադրիչն անհրաժեշտ է մինչեւ ՄՄ մտնելը՝ մի շարք խնդիրներ լուծելու համար:

Կպակասի՞ արդյոք արտագաղթը, թե՞ առավել մեծ ծավալներ կընդունի:

Բոլոր դեպքերում Հայաստանը գնում է դեպի անհայտություն, որ կարող է եւ բարեկեցության ծիլեր պարունակել, եւ կործանման՝ անկախ ազգային անվտանգության եւ պետականության համակարգն ապահովելու մեծ պայմանի իրագործումից:

Սա միակ դեպքն է, երբ հայ քաղաքական գործիչները պետք է ազնվություն ունենան ասելու այն, ինչ մտածում են, եւ ոչ թե՝ այն, ինչ պետք է, չնայած բոլոր մյուս դեպքերի համար կարող են վարվել առաջվա պես, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, քանի որ դրա համար նրանց դեմ ոչ ոք հայց չի ներկայացնում էթիկայի հանձնաժողով:

Ու քաղաքական նպատակահարմարության դրվածքն ամբողջ աշխարհում շատ լուրջ է. օրինակ՝ թե Դավութօղլուի այցը մենք ո՞նց ենք ընկալել, սա մի խնդիր է, իսկ Թուրքիայում գտնվել է պատգամավոր, որ ասել է, թե Դավութօղլուն Հայաստանում խոսել է ինչպես հայը: Կարծես մերոնք լրիվ հակառակն են ասում՝ Դավութօղլուի այցն անվանելով Թուրքիայի խորամանկությունը՝ կասեցնելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ ճանաչման գործընթացի եւ հարակից այլ քայլերի ակտիվությունը: Եւ որ՝ թուրքերը ձեւ են անում, թե հայերի հետ հարաբերություն են կարգավորում, մինչդեռ դա ճանաչման գործընթացը կասեցնելու շոու է: Հիմա ո՞վ ում է խայծ տվել, ո՞վ չի կուլ տվել խայծը՝ դեռ տեսնվում է: Բայց հասկանալի է մի բան՝ ով ուզում է ժպտա մեզ՝ Դավութօղլու կլինի, թե մի ուրիշը, ինչ ճանապարհային քարտեզ էլ լինի, մենք տարածք վերադարձնողը չենք, ոչ էլ ճանաչումից, դատապարտումից եւ հատուցումից որեւէ հայ կհրաժարվի: Բայց պատեհությունը տարբեր կերպ է պտտեցնում քաղաքական լեզուները:

Ու որ հերթականությունը նայում ենք՝ գլուխ պտտվելու բան է. Հայաստանը հայտարարում է ՄՄ-ին անդամակցելու մասին, եվրոպաշտոնյաներն իրար են խառնվում, տարբեր հայտարարություններ հնչեցնում, դե, միայն իրենք չէ՝ ամերիկյան կողմից եւս տարբեր ձայներ են լսվում: Գալիս է Պուտինն ու ասում՝ ես Կովկասից չեմ հեռանա: Գալիս է Էրդողանն ու ասում՝ մենք այստեղ ենք, ներկա ենք, այսինքն՝ առանց մեզ ոչ մի հարց չենք թողնի լուծվի տարածաշրջանում, այդ թվում՝ Ղարաբաղյանը: Այդ արանքում մի լրատվական բադիկ նետվեց, թե Նալբանդյանն ինչպես է խույս տվել թուրք պաշտոնյայից միջազգային այցերից մեկի ժամանակ, այսինքն՝ հետեւներից ընկած են: Գալիս ու գալիս են՝ խեր լինի: Գալիս են համանախագահներն ու ասում... բայց սա արդեն նոր շարունակություն է ուզում:

Այժմ սպասենք Մաքսային միության վերաբերյալ քննարկմանը:





# Իսրայելին սպառնացող ամենամեծ վտանգը

***Իսրայելին դիմելով՝ հրեա լրագրող Յուրի Ավներին ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածում կոչ է անում վերջ դնել Նաթանյահուի մտասեւեռումներին եւ ողջունել Ժնեւում կայացած ամերիկա-իրանյան համաձայնությունը:***

Իսրայելին սպառնացող ամենամեծ վտանգը ոչ թե իրանյան միջուկային զենքն է, այլ մեր առաջնորդների հիմարությունը: Վերջերս Բենիամին Նաթանյահուն եւ Իսրայելի համարյա ամբողջ քաղաքական հաստատությունները սահմանեցին հիմարության նոր ռեկորդ: Սա միայն Իսրայելին բնորոշ երեւույթ չէ: Աշխարհի ղեկավարներից շատ շատերն են հիմար: Միշտ էլ հիմար են եղել: Բավական է նայել, թե ինչ տեղի ունեցավ Եվրոպայում 1914-ի հուլիսին, երբ հիմար քաղաքագետների եւ անկարող գնդապետների մի անհավատալի բազմություն մադկությանը նետեցին Առաջին համաշխարհային պատերազմի հորձանուտի մեջ:

Բայց սկսենք վերջից:

Այսօր Իրանն է մեծագույն հաղթանակողը: Նրան վերջապես ջերմորեն դարձյալ ընդունում են քաղաքակիրթ երկրների ընտանիքում: Նրա դրամական միավորը՝ ռիալը, արժեւորվում է: Նրա հեղինակությունն ու ազդեցությունը տարածաշրջանում գերագույն աստիճանի են հասել: Նրա թշնամիները մահմեդական աշխարհում՝ Սաուդյան Արաբիան եւ Ծոցի նրա արբանյակները, նվաստացած վիճակում են: Որեւէ ռազմական հարձակում նրա դեմ, որեւէ երկրի (այդ թվում նաեւ Իսրայելի) կողմից աներեւակայելի է դարձել: Նաթանյահուի եւ Ահմեդինեժադի պատկերացումներով հիմար այաթոլլաների երկիրը չկա այլեւս: Իրանն այսօր վստահության արժանի, պատասխանատվության զգացումով տոգորված երկիր է, զգաստ եւ խորաթափանց ղեկավարներով:

Մինչդեռ Իսրայելը մեծագույն պարտվողն է: Նա իրեն ամբողջական մեկուսացման մեջ է դրել: Նրա պահանջները անտեսվում են: Ավանդական բարեկամները երես են թեքել: Բայց ամենակարեւորը՝ նրա հարաբերությունները Մ. Նահանգների հետ լրջորեն խաթարվել են:

Այն, ինչ «Նաթանյահուն եւ ընկերները» կատարում են, պարզապես անհավատալի է: Նստելով ծառի ամենաբարձր ճյուղի վրա, նրանք համառորեն սղոցում են այն: Շատ է խոսվել եւ գրվել Մ. Նահանգներից Իսրայելի ամբողջական կախվածության մասին: Բայց հիմարության աստիճանը հասկանալու համար պետք է նշել, որ Իսրայելն է վերահսկում, իրականում, մուտքը դեպի Մ. Նահանգների իշխանության կենտրոնական մարմիններ:

Բոլոր երկրներն էլ գիտեն, հատկապես փոքր եւ աղքատ երկրները, որ Ամերիկայի «Սուլթանի» դահլիճը մուտք գործելու համար անհրաժեշտ է կաշառել դռնապանին: Կաշառքը կարող է լինել քաղաքական (առավելություններ իրենց երկրի ղեկավարի կողմից), տնտեսական (հումք), դիվանագիտական (քվեներ ՄԱԿ-ում), ռազմական (բազաներ կամ հետախուզական «համագործակցություն») եւ այլն: Եթե կաշառքը բավական մեծ է, ապա AIPAC-ը (Ամերիկա-իսրայելական հասարակական գործերի հանձնաժողով) կօժանդակի, որ Կոնգրեսը պաշտպանի տվյալ երկրի խնդրանքը կամ առաջարկը:

Հավասարը չունեցող նման առավելություն ստանալը խոսում է Մ. Նահանգներում Իսրայելի ունեցած առանձնահատուկ դիրքի մասին: Բայց Նաթանյահուի պարտությունը ամերիկա-իրանյան հարաբերությունների շրջանակներում ամբողջովին փոխեց այս ընկալումը: Նրան պատճառված վնասը անհաշվելի է:

Իսրայելի քաղաքագետները, ինչպես իրենց գործընկերները աշխարհի այլ երկրներում, լավ չեն տիրապետում համաշխարհային պատմությանը: Նրանք սովորական կուսակցական ախտողներ են, որոնք իրենց ամբողջ կյանքը անցկացնում են բանսարկություններով: Եթե պատմությունը ուսումնասիրած լինեին, իրենց համար չէին լարի այն թակարդը, որի մեջ հիմա հայտնվել են:

Ես կարող եմ պարծենալ, որ ավելի քան 2 տարի առաջ հոդված էի գրել այն մասին, որ որեւէ հարձակում Իրանի վրա (Իսրայելի կամ Ամերիկայի կողմից) անկարելի է նախաձեռնել: Դա մարգարեական կանխատեսում չէր: Այլ քարտեզին նայելու արդյունք: Հորմուզի նեղուցը: Որեւէ ռազմական գործողություն Իրանի դեմ պատերազմ էր առաջացնելու, վիետնամական պատերազմի բնույթի: Դրան գումարած համաշխարհային նավթային պաշարները փլուզվելու էին: Նման արկածախնդրության դիմողը ոչ միայն պարզապես հիմար պետք է լիներ, այլեւ իսկական խելագար: Ռազմական միջամտության տարբերակը «օրակարգից չի հանվել» պարզապես, որովհետեւ երբեք էլ «օրակարգում չի ընդգրկվել»: Այլ պարզապես դատարկ ատրճանակի դերն է կատարել, եւ իրանցիները շատ լավ գիտակցել են դա:

Լիցքավորված զենքը տնտեսական պատժամիջոցներն էին: Դա վնասում էր ժողովրդին, ինչը ստիպեց գերագույն առաջնորդ Ալի Խամենեիին ամբողջովին փոխել վարչակազմը եւ բոլորովին նոր ու տարբեր նախագահ բերել իշխանության ղեկին:

Ամերիկացիները հասկացան կատարվածը եւ գործեցին համապատասխանորեն: Նաթանյահուն, իր «ռումբային» մտասեւեռումներով տարված, չհասկացավ: Իսկ ամենավատն այն է, որ նա շարունակում է չհասկանալ: Դա արդեն խելագարության ախտանիշ է: Մենք պարտավոր ենք լուրջ մտահոգվել «արքա Բիբիի» (Նաթանյահուի-Հ. Ծ.) առողջությամբ, քանի որ նա շարունակում է կատարել այն, ինչը քանիցս ձախողության է մատնվել:

Իր հեղինակությունը փրկելու նպատակով, AIPAC-ը սկսել է իր սենատորներին եւ կոնգրեսականներին պատվիրել նոր պատժամիջոցներ մշակել հետագայում (անորոշ ժամանակում) օգտագործելու համար: Առաջ քաշված նոր հանկերգը այն է, որ Իրանը խաբում է, որ իրանցիները այլ կերպ չեն կարող վարվել, որովհետեւ խաբելը իրենց բնավորության մաս է կազմում:

Սա պարզապես ռասիստական բնորոշում է, հիմնված այն տեսակետի վրա, թե քանի որ «բազար» բառը պարսկական ծագում ունի, ուրեմն ամեն ինչում նրանք կարող են խաբել:

Բայց իսրայելցիների այդ համոզմունքն ունի նաեւ ավելի ուժեղ հիմք՝ մեր վերաբերմունքը: Ինչպե՞ս վերաբերվեցինք մենք, երբ 1950-ականներին Իսրայելը սկսեց «կառուցել» իր սեփական միջուկային ծրագիրը Ֆրանսիայի օժանդակությամբ: Նա ստիպված էր խաբել ամբողջ աշխարհին, եւ դա նրան հաջողվեց:

Զուգադիպություն էր, թե ոչ, բայց Իսրայելի հեռուստատեսության 2-րդ կայանը Ժնեւի համաձայնության ստորագրումից ուղիղ երկու օր հետո հեռարձակեց քողազերծող մի հաղորդում: Իր «Փաստ» հեղինակավոր ծրագրում կայանը հարցազրույց էր կազմակերպել հոլիվուդյան հրեա պրոդյուսեր, միլիարդատեր Արնոն Միլչանի հետ: Հարցազրույցի ընթացքում Միլչանը պարծենում էր, որ աշխատակցել է Լակամի (իսրայելական հետախուզական գործակալության) հետ, որը մասնագիտացել էր գիտական լրտեսության ասպարեզում: Միլչանը խոստովանել էր, որ անգնահատելի ծառայություն է մատուցել՝ ձեռք բերելով անհրաժեշտ նյութեր Իսրայելի միջուկային ծրագրի իրագործման համար: Նա նաեւ հիացմունք էր արտահայտել այդ ժամանակվա հարավաֆրիկյան ռասայական խտրականության վարչակարգի եւ նրա հետ Իսրայելի միջուկային համագործակցության մասին: Հնդկական օվկիանոսում հավանական միջուկային փորձարկումը այդ ժամանակ խորհրդավորության մթնոլորտ էր առաջացրել ամերիկացի գիտնականների մեջ, եւ շշուկներ կային Իսրայել-հարավաֆրիկյան համագործակցության վերաբերյալ: Երրորդ շահագրգիռ կողմը Իրանի շահն էր, որը նույնպես ուներ միջուկային ձգտումներ: Պատմության հեգնանքը կարելի է համարել այն, որ Իսրայելը նպաստել է այդ բնագավառում Իրանի ձեռնարկած միջուկային առաջին քայլերին:

Իսրայելի առաջնորդներն ու գիտնականներն ամեն ինչ արեցին, որ թաքցնեն իրենց միջուկային գործունեությունները: «Դիմոնա» ռեակտորի կառուցումը ներկայացված էր որպես տեքստիլ կոմբինատի շինություն: Այնպես որ, երբ մեր առաջնորդները խաբեությունից են խոսում, նրանք հաստատ գիտեն, թե ինչ է դա նշանակում:

Բայց ամերիկա-իսրայելական հարաբերությունների ամենատարօրինակ արտահայտությունը Իսրայելի բողոքն է, որ Ամերիկան գաղտնի, առանց Իսրայելին տեղեկացնելու, պայմանավորվել... կապեր է հաստատել Իրանի հետ: Ինչպիսի՞ հանդգնություն: Ինչպե՞ս կարող էր Ամերիկան նման քայլ կատարել եւ հետո միայն, ուշացումով տեղյակ պահել Իսրայելին: Եզրակացությունն այն է, որ Ամերիկան պարտավոր է իր յուրաքանչյուր քայլը քննարկել Իսրայելի հետ: Հետաքրքրական է:

Կարծում եմ՝ Օբաման ճիշտ էր մտածելու, որ տնտեսական պատժամիջոցները մինչեւ որոշակի տեղ կարող են գնալ: Ոչ ավելի առաջ: Օբաման ներկայումս հույսը դրել է Իրանում վարչակազմի փոփոխության վրա, որն արդեն սկսվել է: Նոր սերունդը նոր մոտեցում է ցուցաբերում: Դա այլ տեղերում էլ տեղի է ունեցել՝ Խորհրդային Միությունում, Չինաստանում, Կուբայում, իսկ հիմա Իրանում է տեղի ունենում: Ի՞նչ պետք է մենք անենք: Իմ կարծիքով՝ միանալ նրանց: Վերջ տալ Նաթանյահուի մտասեւեռումներին: Ողջունել Ժնեւյան համաձայնությունը, որովհետեւ դա լավ է նաեւ Իսրայելի համար: Պետք է հետ կանչել «Կապիտոլ Հիլում» աշխատող AIPAC-ի արյունարբուներին: Անհրաժեշտ է պաշտպանել Օբամային: Կարգավորել հարաբերությունները Մ. Նահանգների հետ: Եվ ամենակարեւորը՝ շոշափուկներ ուղարկել Իրան եւ փորձել բարելավել մեր հարաբերությունները:

Պատմությունը ցույց է տվել, որ երբեմնի ընկերները կարող են փոխվել թշնամիների եւ հակառակը՝ երբեմնի թշնամիները կարող են դառնալ դաշնակիցներ:

Մենք կարիք ունենք ղեկավարների փոփոխության: Իրանը փոխվեց: Մենք էլ պետք է փոխվենք: Դժբախտաբար Իսրայելի բոլոր քաղաքագետները միացել են «հիմարների շքերթին»: Ոչ մեկը դրա դեմ չի արտահայտվում: Լեյբորիստական կուսակցության նոր առաջնորդ՝ Յիցհակ Հերցոգը նրանցից մեկն է, ինչպես նաեւ Յաիր Լապիդը եւ Ցիպի Լիվնին:

Ինչպես իդիշ լեզվով ասում են՝ «Հիմարները կարող են զվարճանք պատճառել, եթե մեր հիմարները չլինեն»:




**Թարգմ. Հ. Ծ.**

# Ի՞նչ կտա Ադրբեջանին երկրորդ «դարի պայմանագիրը»

*1-ին էջից*

Իսկ պայմանը մեկն է՝ BP-ն կատարում է հարկավոր ներդրումները, պայմանով, որ Ադրբեջանը հրաժարվում է իր 10 տոկոս մասնաբաժնի դիմաց շահույթից այնքան ժամանակ, քանի դեռ ներդրումները չեն փոխհատուցվի: Ադրբեջանցի փորձագետ Իլհամ Շաբանի հաշվարկներով՝ «Շահդենիզ- 2» նախագծից ակնկալվող առավելագույն շահույթը 150-160 մլրդ դոլար է, որը կգոյանա հանքավայրը 10 տարի շահագործելու ընթացքում:

Բայց ի՞նչ երաշխիք, որ այդ ընթացքում, երբ BP-ն կվերականգնի իր ներդրումները, չեն ծագի լրացուցիչ դժվարություններ: Հարցը հռետորական չէ: Այսօր իսկ Ադրբեջանի կառավարությունը եւ բրիտանական նավթային ընկերությունը սուր վիճաբանությունների մեջ են Կասպից ծովում նավթի արդյունահանման ծավալների անշեղ կրճատման խնդրի շուրջ:

Բաքվում իշխող վարչախմբի կարծիքով՝ բրիտանական կողմն ամեն ինչ պետք է անի, որ նավթի արդյունահանման տարեկան 50 մլն տոննա ծավալները պահպանվեն, ինչի վրա է կառուցված «տնտեսական հրաշքի» տեսությունը, իսկ BP-ն պնդում է, որ կատարել է «դարի պայմանագրով» ստանձնած բոլոր պարտավորությունները, իսկ եթե ադրբեջանական կառավարությունը շահագրգռված է նավթի արդյունահանման ծավալների պահպանմամբ, ապա պետք է առնվազն կիսի լրացուցիչ ներդրումների բեռը:

Այս հողի վրա Բաքվում իշխող վարչախումբը նույնիսկ BP-ին մեղադրել էր «նավթի արդյունահանման ծավալների միտումնավոր կրճատման միջոցով քաղաքական նպատակներ հետապնդելու» մեջ, սակայն բրիտանական կողմն անդրդվելի է մնացել: Այս իրողության նկատառմամբ բացառված չէ, որ նույն պատմությունը կրկնվի նաեւ «Շահդենիզ- 2» նախագծի դեպքում. երբ արեւմտյան ներդրողները կվերականգնեն իրենց ծախսածն ու կստանան ակնկալվող շահույթները, դարձյալ Ադրբեջանի կառավարությանը կթողնեն իր հոգսերի հետ մենակ:

Իհարկե, իշխող վարչախումբն ու «թագավորական ընտանիքը» կստանան գործարքից իրենց բաժինը ոչ միայն հնչուն դրամի, այլեւ քաղաքական «տոկոսների» տեսքով: Արեւմտյան երկրների քաղաքական գործիչները չեն զլանա եւ Ադրբեջանը կբնութագրեն որպես «Կասպյան տարածաշրջանում կարեւոր գործընկերոջ» կամ «Ռուսաստանի հակակշիռ»:

Դա թույլ կտա, որ Իլհամ Ալիեւը 2018-ին եւս «հաղթի նախագահական ընտրություններում» եւ շարունակի պաշտոնավարել այնքան, որքան Կասպից ծովի ադրբեջանական հատվածից հնարավոր կլինի արդյունահանել վերջին մեկ մլն բարել նավթն ու մեկ մլն խմ գազը: Բայց ի՞նչ է շահել ադրբեջանական ժողովուրդը «դարի պայմանագրից», որպեսզի հույս տածի, թե շահելու է նաեւ երկրորդ «դարի պայմանագրից»:

# Եմենն արգելեց անօդաչու ինքնաթիռների թռիչքները




Եմենի խորհրդարանը ընդունել է օրենք, որն արգելում է երկրի տարածքում անօդաչու ինքնաթիռների օգտագործումը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով եմենյան Սաբա լրատվական գործակալությանը:

Եմենում անօդաչու ինքնաթիռների բոլոր թռիչքները ղեկավարում է ամերիկյան ԿՀՎ-ն, որը փորձում է պայքարել «Ալ Ղաիդայի» անդամների դեմ: Օրենքի ընդունման առթիվ ԱՄՆ-ի արձագանքը դեռեւս անհայտ է:

Պատգամավորները նոր օրենքն ընդունել են անօդաչու ինքնաթիռի հետ կապված նոր միջադեպից հետո, որի հետեւանքով զոհվեցին խաղաղ բնակիչներ: Դեկտեմբերի 13-ին Ռադաա քաղաքի շրջանում նման ինքնաթիռի հարվածից զոհվել էին հարսանեկան հանդիսություններին մասնակցող 17 անձինք: Ըստ որում, հաջողվել էր ոչնչացնել նաեւ որոնվող մի քանի ահաբեկիչների:

Տարբեր աղբյուրների համաձայն, անօդաչու ինքնաթիռների հարվածների հետեւանքով Եմենում սպանված խաղաղ բնակիչների թիվը տատանվում է մի քանի հարյուրից մինչեւ առնվազն հազար մարդու սահմաններում:

# Գերմանիայի պաշտպանության նոր նախարարը 7 երեխայի մայր է



Գերմանիայի պատմության մեջ առաջին անգամ պաշտպանության նախարարի պաշտոնը կին կզբաղեցնի: Ուրսուլա ֆոն դեր Լայենը, որը մասնագիտությամբ բժիշկ է, 7 զավակների մայր է եւ անցյալում զբաղեցրել է աշխատանքի ու սոցիալական ապահովության նախարարի պաշտոնը:

Պաշտպանության նախարարի պաշտոնում նրա նշանակումը Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության եւ «Քրիստոնեա-դեմոկրատական միություն» կուսակցության փոխհամաձայնության շնորհիվ ձեւավորված նոր կառավարող կոալիցիայում պաշտոնների բաշխման արդյունքն է, նշում է «Դոյչե վելլե» ռադիոկայանը:

Ուրսուլա ֆոն դեր Լայենի նշանակման մասին հայտարարել է «Քրիստոնեա-դեմոկրատական միություն» կուսակցության առաջնորդ, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը:

Պաշտպանության ներկայիս նախարար Թոմաս դե-Մեզիերը նոր կառավարությունում կգլխավորի ներքին գործերի նախարարությունը:



# Ավստրալական զորքը հեռացավ Աֆղանստանից



**Ավստրալիան փակել է Աֆղանստանի Ուրուզգան նահանգում գտնվող խոշորագույն ռազմակայանը եւ երկրից դուրս է բերել իր վերջին մարտական ստորաբաժանումները: Այդ մասին դեկտեմբերի 16-ին Սիդնեյում հայտարարել է Ավստրալիայի վարչապետ Թոնի Էբբոթը:**

**Նա ավելացրել է, որ Ավստրալիան «բարձր գին» վճարեց պատերազմի դիմաց, սակայն «զոհաբերությունն ապարդյուն չէր»:**

**Էբբոթի կարծիքով, այդ պնդման ապացույցն այն է, որ մեկ տասնամյակի ընթացքում Ուրուզգանըաս է փոխվել: Radio Australia-ն հաղորդում է, որ աֆղանական այդ նահանգում բարելավվել են ենթակառույցը, կառավարական հիմնարկների աշխատանքի որակը, բնակչության բուժսպասարկումը դարձել է մատչելի, իսկ աղջնակները սկսել են հաճախել դպրոց:**

**Աֆղանստանում մնացել է ավստրալացի 400 զինծառայող, որոնք կմարզեն եւ խորհուրդներ կտան տեղական զինված ուժերին: Բացի դրանից, Կանբերրան տարեկան 100 մլն ավստրալական դոլար (89 մլն ամերիկյան դոլար) կհատկացնի Աֆղանստանի անվտանգության ուժերի ամրապնդման նպատակով:**

**Ավստրալական զորքն Աֆղանստանում է 2001 թվականից: Ռազմական գործողություններին մասնակցել են 25 հազար ավստրալացի զինծառայողներ: Նրանցից 40-ը սպանվել են, 261-ը՝ լրջորեն վիրավորվել: Դա ամենաերկար ռազմարշավն էր Ավստրալիայի պատմության մեջ:**

**ՆԱՏՕ-ի երկրների մեծ մասի, այդ թվում՝ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի զորքերը Աֆղանստանից պետք է հեռանան մինչեւ 2014-ի վերջը:**

# Չիլիում նախագահ դարձավ Միշել Բաշելետը



**Չիլիում անցկացված նախագահական ընտրությունների 2-րդ փուլում նախագահ է ընտրվել Միշել Բաշելետը: Նա այդ պաշտոնում վերընտրվել է 4 տարի տեւած ընդմիջումից հետո: Բաշելետը «Նոր մեծամասնություն» միացյալ ձախ կոալիցիայի թեկնածուն է:**

**Չիլիի ընտրական ծառայության տվյալներով, քվեաթերթիկների 98 տոկոսի մշակման արդյունքների համաձայն Միշել Բաշելետը ստացել է բոլոր քվեների 62,2 տոկոսը, իսկ նրա մրցակցուհին՝ աշխատանքի նախկին նախարար Էվելին Մատտեին, որը կառավարող պահպանողական «Դաշինք հանուն Չիլիի» կուսակցության ներկայացուցիչն է, ստացել է 37,79 տոկոս: Մատտեին արդեն ընդունել է իր պարտությունը, իսկ Չիլիի գործող նախագահ Սեբաստիան Պինյերան հեռախոսով շնորհավորել է Միշել Բաշելետի հաղթանակը:**

**Չիլիի պատմության մեջ առաջին անգամ նախագահական ընտրությունների 2-րդ փուլում պայքարում էին երկու կին թեկնածուներ, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Հատկանշական է, որ նրանք մանկության ընկերուհիներ են եւ 2 գեներալների դուստրեր, որոնք 1973 թ. սեպտեմբերի 11-ի պետական հեղաշրջումից հետո հայտնվել էին բարիկադների տարբեր կողմերում:**

**Չափավորական սոցիալիստ Բաշելետը խոստացել է իր նախագահության առաջին 100 օրերին անցկացնել 50 տնտեսական բարեփոխում, որոնց մեջ առանձնանում են ձեռնարկությունների շահութահարկի բարձրացումը 20-ից 25 տոկոսի, ինչպես նաեւ աստիճանական անցումը անվճար բարձրագույն կրթության, հիշեցնում է Ռոյթեր գործակալությունը:**

**Բաշելետը 2006-2010 թթ. արդեն զբաղեցրել էր Չիլիի նախագահի պաշտոնը, իսկ այս անգամ նրա պաշտոնակալությունը տեղի կունենա 2014 թ. մարտին: Նա կրթությամբ բժիշկ է: Չիլիում 1973 թ. զինվորական հեղաշրջումից հետո նա հայտնվել էր բանտում, ինչպես եւ ձախ հայացքների տեր իր ծնողները: Միշել Բաշելետին ազատ էին արձակել միայն միջազգային միջամտության շնորհիվ: Ազատություն ստանալուց հետո նա տարագրվել էր, սովորել Արեւելյան Գերմանիայում եւ հայրենիք վերադարձել միայն Պինոչետի բռնապետության տապալումից հետո:**

# Հոբելյանական համերգ՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի 85-ամյակին

«Արվեստը շատացնում է Աստծու տված գեղեցիկը. քարին աչքեր է պարգեւում, որ նայի մեզ, ջութակին ձայն, որ լսելի դառնա մեր ներսի լռությունը, բեմում վերստեղծում է մարդու ապրած կյանքը, որ նա տեսնի իր վերելքներն ու անկումները: Արվեստագետներ են բոլոր նրանք, ովքեր շատացնում են կյանքի գեղեցիկը», մի առիթով ասել է Հովհաննես Չեքիջյանը:



Դեկտեմբերի 23-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա հոբելյանական համերգ՝ նվիրված անվանի դիրիժոր եւ խմբավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Չեքիջյանի 85-ամյա տարեդարձին:

Համերգային ծրագրում կատարումներով հանդես կգան Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը եւ Սիմֆոնիկ նվագախումբը, իսկ որպես մենակատարներ՝ Բարսեղ Թումանյանը, Իրինա Զաքյանը, Պերճ Քարազյանը, Սոնա Մովսեսյանը, Մանուշ Հարությունյանը, Սարգիս Աղամալյանը, Պողոս Բեազբեկյանը եւ Զոհրաբ Զոհրաբյանը:

ՀՀ եւ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանը հայկական երգչախմբային արվեստը դուրս է բերել համաշխարհային ասպարեզ:

Սովորել է ծննդավայր Ստամբուլի Մխիթարյան եւ ֆրանսիական Սեն Միշել վարժարաններում, ապա ավարտել է տեղի կոնսերվատորիան, հետագայում կատարելագործվել է Փարիզի Էկոլ Նորմալ դը մյուզիք կոնսերվատորիայում, պրոֆեսոր Ժան Ֆուռնեի դիրիժորական դասարանում:

Ի դեպ, Հովհաննես Չեքիջյանը 5 տարեկանից է սկսել նվագել դաշնամուր: Ղեկավարել է Ստամբուլի հայկական եկեղեցու «Դուրյան» եւ բարեգործական հաստատությունների այլ երգչախմբեր, ինչպես նաեւ եղել է Ստամբուլի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը, ապա իր ստեղծած «Չեքիջյան» երգչախմբի խմբավարը, իսկ հետագայում՝ օպերային թատրոնի երաժշտական ղեկավարն ու պետական երգչախմբի գլխավոր դիրիժորը:

Հ. Չեքիջյանը հայրենադարձել է եւ նշանակվել Հայաստանի պետական երգչախմբի (1969 թ-ից ակադեմիական) գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր: 1975 թ.-ին Չեքիջյանի ղեկավարությամբ Երեւանում կատարվել է Մոցարտի «Ռեքվիեմը», որը համարվել է տարվա երաժշտական երեւույթ: Չեքիջյանը եղել է նաեւ Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի տնօրենն ու գեղարվեստական ղեկավարը, ինչպես նաեւ դասավանդել է Երեւանի կոնսերվատորիայում:

Չեքիջյանը հրաշալի տիրապետում է դասական եւ ժամանակակից խմբերգային արվեստին, աչքի է ընկնում ինքնատիպ գեղարվեստական մտածողությամբ, կատարողական վարպետությամբ եւ արտիստիզմով: Նրա ղեկավարությամբ Հայաստանի պետական երգչախումբն ստեղծել է բազմազան ու հարուստ երգացանկ (ավելի քան 800 ստեղծագործություն) հայ եւ օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործություններից, հանդես է եկել ավելի քան 4000 համերգով:

Չեքիջյանը ղեկավարել է աշխարհի շուրջ 56 նշանավոր սիմֆոնիկ նվագախմբեր (ԽՍՀՄ պետական հեռուստառադիոյի, Մեծ թատրոնի, Սանկտ Պետերբուրգի ակադեմիական, Բուդապեշտի ֆիլհարմոնիայի, Մարսելի օպերային թատրոնի եւ այլն): Հեղինակ է մի շարք վոկալ-սիմֆոնիկ երկերի եւ բազմաթիվ երգչախմբային մշակումների:

Հ. Չեքիջյանն արժանացել է ՀԽՍՀ եւ ԽՍՀՄ Պետական մրցանակների, ՀՀ Մովսես Խորենացու մեդալի, ԽՍՀՄ «Ժողովուրդների բարեկամություն», Հայ եկեղեցու Սբ Սահակ-Սբ Մեսրոպ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Մեսրոպ Մաշտոց, Համաշխարհային հայկական կոնգրեսի «Ոսկե խաչ» շքանշանների:

Էկոլոգիական, Մոնրեալի տեղեկատվական, Բնության եւ հասարակության միջազգային ակադեմիաների անդամ է:

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, դիրիժորԳենադի Ռոժդեստվենսկին Հ. Չեքիջյանի մասին ասել է. «Դիրիժոր պետք է ծնվել: Դա կարելի է ասել Չեքիջյանի երաժշտական ճակատագրի մասին. նա ծնվել է դիրիժոր»:

Հոբելյանական գալա-համերգի ծրագրում միայն Վերդիի գործերն են՝ «Նաբուկո» օպերայի նախերգանքից մինչեւ «Ստաբատ Մատեր» ու «Ռեքվիեմ»: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

Ս. Հ.

# Լոնդոնում մահացել է լեգենդար դերասան Փիտեր Օ՛Թուլը



Լոնդոնում երկարատեւ հիվանդությունից հետո կյանքի 82-րդ տարում վախճանվել է կինոդերասան Փիթեր Օ՛Թուլը, որը հայտնի է դարձել 1962 թվականին Լոուրենս Արաբացու դերով համանուն ֆիլմում:

Դերասանը նաեւ լայն ճանաչում է ստացել Ուիլյամ Շեքսպիրի ստեղծագործությունների թատերական բեմադրություններում: 1970-ական թվականներին նա տառապում էր ալկոհոլամոլությունից, սակայն թողել է խմելն այն բանից հետո, երբ նրա մոտ պանկրեատիտ են ախտորոշել:

Իռլանդիայի նախագահ Մայքլ Հիգինսն ասել է, որ Իռլանդիան եւ աշխարհը զրկվել են կինոյի եւ թատրոնի պատմության մեջ մեծագույն դեմքերից մեկից: Օ՛Թուլն «Օսկար» մրցանակի է ներկայացվել ընդհանուր առմամբ ութ անգամ, բայց այդպես էլ ոչ մի անգամ չի արժանացել այդ պատվին: 2003 թվականին Ամերիկյան կինոակադեմիան նրան «Օսկար» է հանձնել համաշխարհային կինոարվեստի հանդեպ ունեցած վաստակի համար. պարգեւ, որը Փիթեր Օ՛Թուլն ավելի վաղ հրաժարվել է ընդունել:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնը ցավակցություն է հայտնել լեգենդար դերասանի ընտանիքին՝ հատկապես նշելով նրա աշխատանքը Լոուրենս Արաբացու դերում: 1962 թվականին համանուն ֆիլմում հենց այս դերն է հռչակ բերել Փիթեր Օ՛Թուլին, սակայն նա խաղացել է նշանավոր տասնյակ ֆիլմերում, որոնց թվում են՝ «Ինչպես գողանալ միլիոն» (1966), «Առյուծը ձմռանը» (1968), «Կալիգուլա» (1979), «Վերջին կայսրը» (1987), «Տրոյա» (2004) եւ ուրիշներ:

*«Արմենպրես»*

**4-ՐԴ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴՄԵՋ**

# Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը վերընտրվեց




Երեկ տեղի ունեցավ Հայաստանի նկարիչների միության հերթական 18-րդ համագումարը:

Ի դեպ, Նկարիչների միության համագումարները տեղի են ունենում հինգ տարին մեկ: Կարեն Աղամյանը միությունը ղեկավարում է արդեն 15 տարի եւ այս համագումարին եւս նա վերընտրվեց:

Միությունն ունի մոտ 1100 անդամ, որոնցից մոտ 700-ն են Հայաստանում:

Ձայները բաշխվեցին հետեւյալ կերպ՝ Կարեն Աղամյան՝ 319 ձայն, Արմեն Աթանյան՝ 34 ձայն, Ռոբերտ Այվազյան՝ 25 ձայն. անվավեր համարվեց 95 քվեաթերթիկ:

Կարեն Աղամյանը ցանկանում էր, որ բաց քվեարկությամբ ընտրեն թեկնածուներին, սակայն դահլիճն ընդդիմացավ:

Համագումարի ընթացքում գրավոր հարցեր տրվեցին Կարեն Աղամյանին, որոնցից մեկը վերաբերում էր, թե Կարեն Աղամյանը չի կարծում արդյոք, որ տասնհինգ տարին բավարար է նախագահելու համար: Հարցին ի պատասխան Կ. Աղամյանն ասաց. «Ես կարծում եմ, որ տասնհինգ տարին փոքր է: Եթե կցանկանաք, որ շարունակեմ նախագահել, ես պատրաստ եմ եւ կդնեմ իմ թեկնածությունը»:

Ի դեպ, Նկարիչների միության նախագահի պաշտոնի համար առաջադրվել էին ընդամենը երեք թեկնածու:

Հատկանշական է, որ Նկարիչների միության նախագահի թեկնածուների թվում շրջանառվում էր նաեւ ճանաչված նկարիչ Հաղթանակ Շահումյանի անունը: Համագումարի ժամանակ նա հայտարարեց, որ անձամբ ինքը չի առաջադրվի ու նախագահ դառնալու ցանկություն էլ չունի, բայց եթե իր գործընկերներն առաջադրեն իր թեկնածությունը չի էլ մերժի:

Ս. Հ.

# Օպերային երգիչ Բարսեղ Թումանյանը 33 տարի բեմում



Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբն այս անգամ նշում է օպերային երգիչ Բարսեղ Թումանյանի ստեղծագործական գործունեության 33-րդ եւ ծննդյան 55-րդ հոբելյանները:

Երաժշտական երեկոն տեղի կունենա դեկտեմբերի 18-ին Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Ծրագրում կհնչեն հայ, ռուս եւ եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ:

Բարսեղ Թումանյանը այն անվանի երաժիշտներից է, որը բախտ է ունեցել երգել Միլանի «Լա Սկալա» օպերային թատրոնում: Նա եղել է Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի մեներգիչ, իսկ համերգային ծրագրերով ելույթներ է ունեցել Լոնդոնի թագավորական օպերային տանը՝ նվիրված Լենինականի երկրաշարժին, Լոնդոնի «Վիգմոր» դահլիճում, ինչպես նաեւ եվրոպական բազմաթիվ քաղաքներում: Իսկ Ավստրալիայում արժանացել է Հատուկ մրցանակի՝ «Ֆաուստ» օպերային ներկայացման մեջ Մեֆիստոֆելի դերի համար, իսկ Հայաստանում՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը: Մենահամերգներով հանդես է եկել ԱՄՆ-ի, Ավստրիայի, Կանադայի, Գերմանիայի, Չինաստանի, Ճապոնիայի բազմաթիվ քաղաքներում: Ընտրվել է Բնության եւ հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի փոխնախագահ: Իսկ 2000 թ.-ից հանդիսանում է Բարձր արվեստի համաժողովի հայկական մասնաճյուղի նախագահը:

Ս. Հ.

# Մարզական

## Դավիթ Սաֆարյանը ճանաչվել է Հայաստանի լավագույն մարզիկ


AFP PHOTO / PHOTOLURE

Ավանդույթի համաձայն, մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիան որոշեց մրցաշրջան-2013-ի Հայաստանի 10 լավագույն մարզիկներին: Հարցմանը մասնակցել են մարզական 22 լրագրողներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացրել է տասնյակի իր տարբերակը՝ ելնելով ֆեդերացիայի հաստատած թեկնածուների ցանկից:

Ինչպես եւ սպասվում էր, 2013-ի Հայաստանի լավագույն մարզիկ է ճանաչվել ազատոճային ըմբիշ **Դավիթ Սաֆարյանը**, որը վաստակել է 220 միավոր: Դա նշանակում է, որ բոլոր 22 լրագրողներն էլ հարցաթերթիկում նրան նշել են առաջինը: Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ Դավիթը գերազանց ելույթներ ունեցավ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսները, իսկ համաշխարհային Ունիվերսիադայում էլ արժանացավ արծաթե մեդալի:

187 միավորով 2-րդ տեղը գրավել է հունահռոմեական ոճի ըմբիշ **Արթուր Ալեքսանյանը**: Նա այս տարի 2-րդ անգամ անընդմեջ հռչակվեց Եվրոպայի չեմպիոն, իսկ աշխարհի առաջնությունում եւ համաշխարհային Ունիվերսիադայում արժանացավ արծաթե մեդալների:

Սպասվում էր, որ լավագույն եռյակը պետք է եզրափակի սամբիստ **Աշոտ Դանիելյանը**, որն աշխարհի առաջնությունում շահելով բոլոր 5 գոտեմարտերը, ոսկե մեդալի էր արժանացել՝ 2-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվելով աշխարհում: Սակայն նա 109 միավորով միայն 5-րդ տեղն է զբաղեցրել: Դանիելյանին վաստակած միավորներով գերազանցել են հունահռոմեական ոճի ըմբիշներ **Արսեն Ջուլֆալակյանը** (155) եւ **Ռոման Ամոյանը** (119): Արսենը բրոնզե մեդալներ էր նվաճել ըմբշամարտի աշխարհի առաջնությունում եւ համաշխարհային Ունիվերսիադայում, իսկ Ռոմանը 3-րդ տեղն էր գրավել աշխարհի առաջնությունում:

6-րդ տեղը 88 միավորով զբաղեցրել է մարմնամարզիկ **Արթուր Դավթյանը**, որը Եվրոպայի առաջնության հենացատկերի բրոնզե մրցանակակիր է, մոսկովյան մրցաշարում առանձին գործիքների վրա մեդալներ է նվաճել, իսկ բազմամարտում գրավել է 2-րդ տեղը:

Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, բռնցքամարտիկ **Արամ Ավագյանը** (75 միավոր), հունահռոմեական ոճի ըմբիշ, համաշխարհային Ունիվերսիադայի արծաթե մրցանակակիր **Մաքսիմ Մանուկյանը** (52), ազատ ոճի ըմբիշ, Եվրոպայի փոխչեմպիոն **Մուսա Մուրթազալիեւը** (49) եւ հունահռոմեական ոճի ըմբիշ, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր **Արթուր Շահինյանը** (49):

Մարզական լրագրողները հարցաթերթիկներում նշել են նաեւ շախմատիստներ Զավեն Անդրեասյանի եւ Լիլիթ Մկրտչյանի, բռնցքամարտիկներ Արթուր Քիրաջյանի եւ Հենրիկ Մոխյանի, սամբիստներ Տիգրան Կիրակոսյանի, Սոսե Բալասանյանի, Մավրիկ Նասիբյանի, Եռջանիկ Կարապետյանի եւ հունահռոմեական ոճի ըմբիշ Վաչիկ Եղիազարյանի անունները:

Լավագույն թիմ է ճանաչվել Եվրոպայի առաջնությունում թիմային հաշվարկով 3-րդ տեղը գրաված Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը:

Այս տարի մարզիկների լավագույն տասնյակի որոշման հասույկ կարգ է մշակել եւ լրագրողներին ներկայացրել է նաեւ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը: Այդ կարգի համաձայն լրագրողներին մնում է միայն թվաբանական հաշվարկ կատարել եւ որոշել առավել շատ միավորներ վաստակած 10 մարզիկներին: Այսինքն, լրագրողները զրկված են ազատ ընտրություն կատարելու հնարավորությունից, քանի որ սխալ հաշվարկով կազմված քվեաթերթիկները քվեարկությանը չեն մասնակցելու: Ավելի մանրամասն նախարարության մշակած կարգին կանդրադառնանք «**Ազգի**» հաջորդ համարում:

## Տիգրան Պետրոսյանն արագ շախմատի Եվրոպայի բրոնզե մրցանակակիր

Վարշավայում անցկացված արագ շախմատի Եվրոպայի առաջնությունում հայ շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ Տիգրան Լ. Պետրոսյանը՝ դառնալով բրոնզե մեդալակիր: Տիգրանը 11 հնարավորից վաստակեց 9,5 միավոր: Ընդ որում նա միայն լրացուցիչ ցուցանիշներով զիջեց մրցաշարի հաղթող, հունգարացի Ռիչարդ Ռապորտին եւ արծաթե մրցանակակիր, ռուսաստանցի Վլադիմիր Մալախովին:

5-11-րդ տուրերում Պետրոսյանն ընդամենը կես միավոր զիջեց Լուկաշ Լիժնեւսկուն, իսկ մնացած 6 պարտիաներում հաղթեց Ստանիսլավ Միրսկուն, Գաբրիել Գաեւիլերին, Մաչեյ Կլեկովսկուն, Կարեն Գրիգորյանին, Ալեքսեյ Դրեեւին ու Մարկուս Ռագգերին:

Գաբրիել Սարգսյանը 8,5 միավորով գրավեց 12-րդ տեղը: Նույնպիսի արդյունքով Զավեն Անդրեասյանը 26-րդն է, իսկ Կարեն Գրիգորյանը 8 միավորով հանգրվանեց 30-րդ հորիզոնականում:

Կայծակնային խաղի Եվրոպայի առաջնությունում եւս Տիգրան Պետրոսյանը մոտ էր մրցանակակիր դառնալուն: Սակայն ավարտական տուրում նա 2 պարտիաներում էլ պարտվեց ուկրաինացի




գրոսմայստեր Անտոն Կորոբովին ու զրկվեց մեդալից: Տիգրանը 22 հնարավորից վաստակած 16 միավորով գրավեց 9-րդ տեղը: Իսկ ահա Անտոն Կորոբովն այդ հաղթանակների շնորհիվ 18,5 միավորով դարձավ Եվրոպայի չեմպիոն: 17-ական միավորով արծաթե եւ բրոնզե մեդալները նվաճեցին Վլադիսլավ Տկաչովն ու Բարտոշ Սոչկոն:

Գաբրիել Սարգսյանը եւ Զավեն Անդրեասյանը 16,5-ական միավորով գրավեցին համապատասխանաբար 6-րդ եւ 7-րդ տեղերը: 16 միավորով Կարեն Գրիգորյանը եզրափակեց լավագույն տասնյակը:

## Բրազիլահայ շախմատիստի հաջող մեկնարկը

Բրազիլիայի շախմատի 80-րդ առաջնությունում հաջող է մեկնարկել բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Մեկնարկային 4 տուրերում նա վաստակել է 3,5 միավոր՝ ընդամենը կես միավորով հետ մնալով Ցեզար Ումետսուբոյից:

### ՇԱԽՄԱՏ

## Սամվել Տեր-Սահակյանը նվաճեց գլխավոր մրցանակը




Երիտասարդ գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանի հաղթանակով ավարտվեց Կալկաթայում անցկացված շախմատի մրցաշարը: Սամվելը 10 հնարավորից վաստակեց 7,5 միավոր եւ լրացուցիչ գործակիցների շնորհիվ առաջ անցավ նույնպիսի արդյունք ցույց տված Միխայիլ Մոժարովից, Լեւան Պանցուլայայից, Տիգրան Ս. Պետրոսյանից եւ Ազեր Միրզոեւից:

Վերջին տարիներին Սամվելը որպես կանոն անհաջող էր անցկացնում մրցաշարերի ավարտական տուրերը, որի պատճառով հաճախ զրկվում էր գլխավոր մրցանակից: Այս անգամ, բարեբախտաբար, ամեն ինչ հաջող ընթացավ:

7-րդ տուրում միակ պարտությունը կրելով, Սամվելը վերջին 3 տուրերում 2,5 միավոր վաստակեց՝ հաղթելով Մուրալի Կարտիկեյանին ու Թոռնիկե Սանիկիձեին, ոչ-ոքի խաղալով Իվան Պոպովի հետ: Հայ շախմատիստը բացի գեղեցիկ գավաթից, նաեւ 200 հազար ռուփի դրամական պարգեւ ստացավ:

Դրվատանքի է արժանի նաեւ Տիգրան Ս. Պետրոսյանը, որը միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց Սամվելին՝ գրավելով 4-րդ տեղը: Տիգրանը գերազանց խաղաց վերջնագծում՝ տոնելով 5 անընդմեջ հաղթանակ Լոկեշի, Ակաշի, Հովիկ Հայրապետյանի, Մերաբ Գագունաշվիլու եւ Թոռնիկե Սանիկիձեի նկատմամբ:

Հովիկ Հայրապետյանը 6,5 միավորով գրավեց 14-րդ տեղը: Լեւոն Բաբուջյանը 6 միավորով հանգրվանեց 21-րդ հորիզոնականում: Վահե Բաղդասարյանը 5,5 միավորով 34-րդն էր, իսկ Մարիա Գեւորգյանը 3,5 միավորով 76-րդն էր:

## Ղարամյանը հաղթողին զիջեց կես միավորով

Լոնդոնի շախմատի մրցաշարի հաղթող դարձավ նորվեգացի գրոսմայստեր Յոն Լյուդվիգ Համերը, որը 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր: Տիգրան Ղարամյանը 7 միավորով զբաղեցրեց 3-րդ տեղը: Ավարտական 3 տուրերում Ղարամյանը ոչ-ոքի խաղաց Ջիաուր Ռահմանի հետ եւ հաղթեց Կալե Կիկին ու Յուստին Սարկարին:

## Արոնյանը 2-րդն է

Պեկինում վերջնագիծը հատեց համաշխարհային մտավոր խաղերի ծրագրով կայծակնային շախմատի մրցաշարը: Եթե արագ շախմատի մրցաշարում Լեւոն Արոնյանը շատ անհաջող էր խաղացել՝ 16 մասնակիցների մեջ գրավելով ընդամենը 14-րդ տեղը, ապա կայծակնային խաղում հայ գրոսմայստերը գերազանց ելույթ ունեցավ: Արոնյանը 30 հնարավորից վաստակած 19,5 միավորով գրավեց 2-րդ տեղն՝ արժանանալով արծաթե մեդալի: Ընդ որում Արոնյանը հաղթողի տիտղոսը Սերգեյ Կարյակինին զիջեց միայն լրացուցիչ գործակիցներով:

30 պարտիաներում Արոնյանը տոնեց 16 հաղթանակ, 7 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց նույնքան պարտություն: Սերգեյ Կարյակինի հետ մրցավեճում Լեւոնն անհաջող խաղաց՝ 2 պարտիաներում վաստակելով ընդամենը կես միավոր: Հենց դա էլ վճռորոշ եղավ գլխավոր մրցանակի համար մղվող պայքարում:

Արոնյանն առավել հաջող խաղաց Ռուսլան Պոնոմարյովի, Վան Հաոյի, Գատա Կամսկու, Լիեմ Լե Քուանի եւ Թեյմուր Ռաջաբովի հետ՝ հաղթելով 2 պարտիաներում էլ: Նա 1,5 միավոր վաստակեց Վան Յուեի, Պերես Լեյնիեր Դոմինգուեսի եւ Մաքսիմ Վաշիե-Լագրավի հետ մրցախաղերում: Յան Նեպոմնյաշչիու եւ Վասիլի Իվանչուկի հետ մրցախաղերում Արոնյանը մեկական հաղթանակ տոնեց ու պարտություններ կրեց: Իսկ ահա Ալեքսանդր Գրիշչուկի, Շահրիյար Մամեդյարովի եւ Անիշ Գիրիի հետ մրցախաղերում հայ շախմատիստն ընդամենը կեսական միավոր վաստակեց:

## «Բորուսիան» կմրցի «Զենիթի» հետ

Երեկ Նիոնում կայացած ֆուտբոլի չեմպիոնների լիգայի վիճակահանության արդյունքներով Դորտմունդի «Բորուսիան» 1/8 եզրափակիչում կմրցի Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» հետ: Ահա մյուս զույգերը:

«Մանչեսթր Սիթի»-«Բարսելոն»
«Օլիմպիակոս»-«Մանչեսթր Յունայթեդ»
«Միլան»-«Ատլետիկո»
«Բայեր»-ՊՍԺ
«Գալաթասարայ»-«Չելսի»
«Շալկե-04»-«Ռեալ»
«Արսենալ»-«Բավարիա»

Առաջին հանդիպումը «Բորուսիան» կանցկացնի մրցակցի հարկի տակ:

1/8 եզրափակիչի 1-ին հանդիպումների օրերն են փետրվարի 18-19-ը եւ 25-26-ը: Պատասխան հանդիպումները կկայանան մարտի 11-12-ին եւ 18-19-ին: Հիշեցնենք, որ չեմպիոնների լիգայի եզրափակիչը տեղի կունենա 2014-ի մայիսի 24-ին Լիսաբոնում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Բարձր արժանապատվությամբ կյանքի արգասաբեր ուղի

## *Նրբագծեր Ֆերդինանդ Ղազարյանի դիմանկարին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ*

Մեր երկրի, նրա ժողովրդի համար բարեբախտություն եւ թանկագին հարստություն է, երբ արժանապատիվ քաղաքացին ու պետական ազնիվ նկարագրով պաշտոնյան նույնանում են նույն անձի մեջ: Այդպիսի անհատներ եզակի չէին նախորդ՝ խորհրդային դարաշրջանում: Այդպիսի արժանապատիվ նկարագրով, վատի ու չարի դեմ ընդվզող բնավորությամբ անհաս է Վայոց ձորի լավագույն զավակներից Ֆերդինանդ Կարապետի Ղազարյանը:



Ծնվել է 1938 թ. դեկտեմբերի 16-ին Վայքի շրջանի Ազատեկ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է հարեւան Զառիթափի միջնակարգ դպրոցում: Ապա ընդունվել է Գորիսի մանկավարժական ուսումնարան, որն ավարտել է 1958 թվականին եւ նույն տարում ուսումնառությունը սկսել Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետում:

Վերոնշյալ բարձրագույն կրթօջախը ավարտելուց հետո աշխատանքի է անցել Վայք քաղաքի թիվ 1 միջն. դպրոցում որպես ուսումնական մասի վարիչ: 1965 թ. ընտրվել է ՀԼԿԵՄ Վայքի շրջկոմի առաջին քարտուղար եւ այդ պաշտոնում մնացել մինչեւ 1967 թվականը:

Հենց այդ տարիներին նա հեռակա կարգով ուսումնառությունը շարունակել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում:

1967-1974 թթ. աշխատել է Հայաստանի կոմկուսի Վայքի շրջանային կոմիտեի կազմակերպական բաժնի վարիչ: 1974 թ. ընտրվել է ՀԿԿ Վայքի շրջկոմի քարտուղար, իսկ 1976 թվականին՝ երկրորդ քարտուղար: 1985 թ. դեկտեմբերից մինչեւ 1991 թվականը բեղուն ու արդյունավետ գործունեություն է ծավալել առողջարանային քաղաքի՝ Ջերմուկի քաղխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնում: Ջերմուկցիները վերոնշյալ տարիները համարում են իրենց քաղաքի զարգացման ու բարգավաճման ամենաշքեղ շրջանը:

Եկավ անկախության դարաշրջանը: 1990 թ. Ֆ. Ղազարյանը արժանացավ ջերմուկցիների միահամուռ վստահությանը եւ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Նրա կյանքի եւ գործունեության մեջ սկսվեց մի նոր շրջան: Գերագույն խորհրդում ընդգրկվեց իրեն համար շատ հոգեհարազատ՝ կրթության, գիտության, լեզվի եւ մշակույթի հանձնաժողովի կազմում:

Աչքի ընկավ վերոնշյալ ոլորտին վերաբերող բոլոր կարեւոր օրինագծերի եւ օրենսդրական նախաձեռնությունների քննարկումների եւ մշակման գործընթացներում: Լայն հասարակայնությունը հիացած էր նրա խոր գիտելիքներից, իրազեկվածությունից, ներքին բարձր կուլտուրայից, սկզբունքային ու հաստատակամ դիրքորոշումից: Նույնքան սկզբունքային ու աննահանջ պայքար էր տանում այդ տարիներին հանրապետությունում արմատացող ծայրաստիճան բացասական երեւույթների, հանրային ունեցվածքի փոշիացման, համատարած քայքայման եւ ալան-թալանի դեմ: Հասարակական-քաղաքական ակտիվ, եռանդուն եւ արդարադատ գործունեության շնորհիվ նա ձեռք բերեց աննախադեպ ժողովրդականություն ու անբասիր հեղինակություն:

Պատգամավորական գործունեությունը Ֆ. Ղազարյանը ներդաշնակորեն համատեղել է գիտական ու մանկավարժական գործունեության հետ: Դեռեւս 1978 թվականին նա պաշտպանել էր թեկնածուական ատենախոսություն եւ ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գիտական մամուլում հրապարակել է մի շարք գիտական հոդվածներ, ինչպես նաեւ հրապարակախոսական հարյուրավոր հոդվածներ: Դեռեւս խորհրդային տարիներին լույս է տեսել նրա «Դպրոցականների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում» ուշագրավ մենագրությունը: Համահեղինակ է «Ջերմուկ» շքեղ ու բովանդակալից գիրք-ուղեցույցի, որը լավագույնն է համարվում առողջարանային հրաշագեղ քաղաքը ներկայացնող մինչ այդ եղած բոլոր հրապարակումների մեջ:

Թողնելով պատգամավորական գործունեությունը՝ Ֆերդինանդ Ղազարյանը, սակայն, երբեք չթողեց հասարակական ակտիվ ասպարեզը եւ իր բանավոր ու գրավոր խոսքը մշտապես ի նպաստ դրեց երկրին ու ժողովրդին հուզող մեծ ու փոքր խնդիրների բարձրացման ու լուծման ուղիների որոնմանը: 1990-ական թթ. Հայաստանի բազմաթիվ պարբերականներում լույս տեսան սուր եւ արդիական հարցադրումներով լեցուն հոդվածներն ու հարցազրույցները, որոնցում նա հանդես է գալիս որպես իր ժողովրդին անսահմանորեն նվիրված իսկական ու ճշմարիտ հայրենասեր, արդարության ոգով ու շնչով տոգորված բարձր քաղաքացի եւ հայոց դարավոր խիղճն ու արժանապատվությունը իր մեջ ամբարող ու խտացնող հայ անհատ: Երկրի քաղաքական ճակատագրից մինչեւ հայ գյուղացուն հուզող խնդիրներն ու հիմնահարցերը ընկած էին տաղանդավոր հրապարակախոսի հասարակական-քաղաքական գործունեության առանցքում: Առաջադեմ մի խումբ անհատների հետ համախորհուրդ հիմնադիրներից մեկը հանդիսացավ «Գերագույն խորհուրդ. Պատգամավորական ակումբ» հասարակական կազմակերպության, որն ակտիվ դերակատարություն ստանձնեց երկրի հասարակական մթնոլորտն ու բարքերը առողջացնելու գործում:

Պատասխանատու տեւական աշխատանքն ու հոգեկան լարվածությունը լրջորեն վնասել էին նրա առողջական վիճակին:

Նա հանկարծամահ եղավ 1997 թ. դեկտեմբերի 26-ին, հիսունինը տարեկան հասակում, երբ այնքան իմաստալից ծրագրեր եւ գեղեցիկ մտահղացումներ ուներ իրագործելու: Հայրենի Վայոց ձորի ժողովուրդը մեծագույն խոնարհումով ու ակնածանքով անմար է պահում նրա հիշատակը եւ խնկարկում այն ամենը, ինչը կապված է ազնվագույն հայորդու կյանքի ու գործունեության պայծառ էջերի հետ:

1999 թ. Ջերմուկ քաղաքի համայնքի ավագանու որոշմամբ Ջերմուկի հանրահայտ ըմպելասրահից մինչեւ Սառնաղբյուր ձգվող ճեմուղին անվանակոչվել է Ֆերդինանդ Ղազարյանի անունով: Ճեմուղու սկզբնամասում կանգնեցված է նրա հիշատակը հավերժացնող հուշաքարը:

Ահա այսպես է ազնիվ ու սկզբունքային, անսակարկելի ու անշահախնդիր հայրենասեր հայորդու հիշատակն անթառամ ապրում հայրենի ժողովրդի հավաքական հիշողության մեջ:

**ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

***ՉՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳԻՐ***

# Արձագանք միգրացիոն ծառայությունից

**2013 թ. դեկտեմբերի 3-ին «Ազգում» հրապարակված «Քանի հոգով կարող են ապրել 13 քմ սենյակում» հոդվածի առնչությամբ հայտնում ենք հետեւյալը.**

Երեւան քաղաքի Ավան համայնքի, Աճառյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 20/3 շենքում (նախկին պրոֆտեխնիկական ուսումնարանի հանրակացարան) բնակվում են Ադրբեջանից բռնագաղթած ընտանիքներ: ՀՀ կառավարության կողմից 2004 թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատվել է 1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիր, եւ ներկայումս վերոգրյալ հասցեում բնակվող թվով 21 ընտանիքներ համարվում են ծրագրի հավակնորդ շահառուներ:

Ծրագրի իրականացման ժամկետները, կացարանների ընտրությունը եւ շահառուների թվաքանակը պայմանավորված են յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված գումարի չափից եւ դրա իրացման վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ:

2009 թվականից, ցավոք, ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող ՀՀ պետական բյուջեում այս խիստ կարեւոր ծրագրի համար գումարներ չեն նախատեսվել, չնայած յուրաքանչյուր տարի միգրացիոն պետական ծառայությունը 4.0 միլիարդ դրամ գումարի բյուջետային հայտ է ներկայացնում:

Միջազգային դոնոր հանրության ուշադրությունը հիմնախնդրի վրա սեւեռելու եւ հնարավոր օգնություն ստանալու ակնկալիքով 2011 թ. մայիսի 17-ին Երեւանում տեղի ունեցավ միջազգային ներկայացուցչական համաժողով, որին մասնակցեց եւ ելույթով հանդես եկավ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար պարոն Անտոնիո Գուտերեշը: Ցավոք, օգնություն ստանալու ակնկալիքները մինչ այժմ չեն արդարացվել:

Ներկայումս 924 ընտանիքներ, որից 670-ը՝ Երեւան քաղաքում, իսկ 254-ը՝ մարզերում՝ համարվում են վերոգրյալ առաջնահերթ ծրագրի շահառուներ: Նախնական գնահատականների համաձայն՝ հիմնախնդրի լուծման համար կպահանջվի շուրջ 12 միլիարդ դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության որոշման կատարման վերջնաժամկետներին, ապա այդ առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության որոշման մեջ անդրադարձ չկա այդ հարցին:

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն**

ВТБ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

»ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ը հայտարարում է Բաց մրցույթ »ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի համար գովազդային ռադիոհոլովակների պատրաստման եւ դրանք ՀՀ տարածքում գործող ռադիոկայաններով հեռարձակման համար մեդիա գործակալությունների եւ/կամ ռադիոընկերությունների ընտրման նպատակով

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Մ.Խորենացի փող., շ. 15/1 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2014թ. հունվարի 17-ը ներառյալ, ժամը 17:00:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2014թ., հունվարի 20-ին, ժամը 17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե, ք. Երեւան, Մ.Խորենացի 15/1 հասցեով:

Կոնտակտային անձ՝

**Լուսինե Սուսանյան**
Հեռ. (+37410) 51-37-49, ներքին՝ 83302
Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am

**Մարինա Սաժումյան**
Հեռ. (+37410) 51-37-49, ներքին՝ 83402
Էլ. փոստ՝ m.a.sazhumyan@vtb.am

Սրբագրում եւ խմբագրում

**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**

**E-mail: xachagox@mail.ru,**
**հեռ.՝ 094 48-68-03**



ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 16.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: